ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

«ՀՀՈՑ-ԳՀԱՊՁԲ-19/31» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով տեսահսկման համակարգերի տեղադրման համար նախատեսված սարքավորումների /այսուհետ Ապրանք/ ձեռքբերման գնահատող հանձնաժողովի գնահատման նիստի

ք. Երևան

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 14.10.2019 ժամը 11.00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ/ Ս. Դավթյանը

Անդամներ՝

Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ/ Վ. Ավետիսյանը

Ռ. Տ. Սահակյանը

Գնման Պատասխանատու /Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ/՝ Ս. Քոչարյանը

Ս. Փայասլյանը

Հանձնաժողովի քարտուղար՝

Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող՝ ԳՊ/ՄՀմ/ Մ. Նիկոլյանը

1. Ընդունել ի գիտություն.

1.1 ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը 08.10.2019 ՀՀ պետական եկամուտների կոմիտեին /Կոմիտե/ կատարել է հարցում՝ ԱՁ Լևոն Մալաքյան, Էկոմիքս ՍՊ, Նոյավան ՍՊ, Էյչ Գրուպ ՍՊ ընկերությունների հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

1.2 Ղեկավարվելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներից պահանջել է երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 08.10.2019 ժամը 17.00 ներկայացնել Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ պահանջվող, հրավերով առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագիրը՝ապրանքային նշանը, արտադրողը և ծագման երկրի վերաբերյալ տեղեկատվություն /ամբողջական նկարագիր/:

2. Հանձնաժողովն արձանագրեց.

2.1 Կոմիտեից 11.10.2019 առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով Կոմպմարկետ, Միկրորինգ, Դեվելոփ քոնսթրաքշն, ՍԻԿՆԻՏ ՍՊ ընկերությունների ժամկետանց պարտավորությունների մասով ստացվել է դրական եզրակացություն, սահմանված ժամկետում՝ մինչև 11.10.2019 հիշյալ մասնակիցների կողմից ներակայացվել են սույն արձանագրության 1.2 կետով պահանջվող փաստաթղթերը /կցվում են/:

2.2 ՍԵԿՈՆԵՏ ՍՊ ընկերության մասով Կոմիտեից ստացված տեղեկատվության արդյունքում արձանագրվել է անհամապատասխանություն՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցած ժամկետանց հարկային պարտավորությունների մասով /կցվում է/: /անհամապատասխանությունը համարվում է շտկված, եթե մասնակիցը ներկայացնում է կոմիտեի տրամադրած տեղեկատվության մեջ նշված գումարի վճարումը հիմնավորող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) օրինակը/:

3. Հանձնաժողովը որոշեց.

3.1 Համաձայն Կարգի 47-րդ կետի՝ նիստը կասեցնել և նույն օրը էլեկտրոնային եղանակով ծանուցել ՍԵԿՈՆԵՏ ՍՊ ընկերությանը՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 16.10.2019 շտկել սույն արձանագրության 2.2 կետով նշված անհամապատասխանությունը:

Նիստը շարունակվել է 17.10.2019 ժամը10.00

Բացակայում է Ս. Քոչարյանը

4. Հանձնաժողովն արձանագրեց.

ՍԵԿՈՆԵՏ ՍՊ ընկերության կողմից ներկայացվել են փաստաթղթեր՝ սույն արձանագրության 2.2 կետով նշված անհամապատասխանության վերաբերյալ, մասնավորապես՝ Կոմիտեի տրամադրած տեղեկատվության մեջ նշված գումարի վճարումը հիմնավորող փաստաթուղթ /քաղվածքը կցվում է/, որում նշված է, որ 03.10.2019 դրությամբ ՍԵԿՈՆԵՏ ՍՊԸ-ն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի ժամկետանց պարտավորություններ

5. Հանձնաժողովը որոշեց.

5.1 Կոմիտեից ստացված տեղեկատվությունը և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը գնահատել բավարար

Ընդունվել է որոշում. 4՝ կողմ, դեմ՝ 0

5.2 Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Կոմպմարկետ ՍՊԸ՝ 6,7,8,9; Միկրորինգ ՍՊԸ՝ 2,3; ՍԵԿՈՆԵՏ ՍՊԸ՝ 5; Դեվելոփ քոնսթրաքշն ՍՊԸ՝ 10,11; ՍԻԿՆԻՏ ՍՊԸ՝ 1 չափաբաժիններով ճանաչել ընտրված մասնակիցներ:

Ընդունվել է որոշում. 4՝ կողմ, դեմ՝ 0

5.3 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը /կցվում է/:

Ընդունվել է որոշում. 4՝ կողմ, դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Ս. Դավթյան

անդամներ՝ _____ Վ. Ավետիսյան

_____ Ռ. Տ. Սահակյան

_____ Ս. Փայասլյան

քարտուղար՝ _____ Մ. Նիկոլյան